

## Նվազագույն տարիքի մասին կոնվենցիա

«»

Աշխատանքի միջազգային կազմակերպության Գլխավոր խորհրդատու Վրալիսա Մալոնոն՝ Աշխատանքի միջազգային բյուրոյի վարչական խորհրդի կողմից, և հավաքվելով 1973 թվականի հունիսի 6-ին՝ իր հիսունութերորդ նստաշրջանին, որոշելով ընդունել որոշ առաջարկություններ աշխատանքի ընդունելու նվազագույն տարիքի մասին, որը նստաշրջանի օրակարգի չորրորդ կետն է, և ուշադրության առնելով Նվազագույն տարիքի մասին» 1919 թվականի կոնվենցիայի (արդյունաբերության ոլորտում), «Նվազագույն տարիքի մասին» 1920 թվականի կոնվենցիայի (ծովային աշխատանքների ոլորտում), «Նվազագույն տարիքի մասին» 1921 թվականի կոնվենցիայի (գյուղատնտեսության ոլորտում), «Նվազագույն տարիքի մասին» 1921 թվականի կոնվենցիայի (նավատորմում ածուխ բեռնողների և հնոցապանների համար), «Նվազագույն տարիքի մասին» 1932 թվականի կոնվենցիայի (ոչ արդյունաբերական աշխատանքներում), «Նվազագույն տարիքի մասին» 1936 թվականի կոնվենցիայի (ծովային աշխատանքների ոլորտում), (վերանայված), «Նվազագույն տարիքի մասին» 1937 թվականի կոնվենցիայի (արդյունաբերության ոլորտում) (վերանայված), «Նվազագույն տարիքի մասին» 1937 թվականի կոնվենցիայի (ոչ արդյունաբերական աշխատանքներում), (վերանայված), «Նվազագույն տարիքի մասին» 1959 թվականի կոնվենցիայի (ձկնորսների համար), «Նվազագույն տարիքի մասին» 1965 թվականի կոնվենցիայի (ստորերկրյա աշխատանքներ) դրույթները, հաշվի առնելով, որ եկել է այդ հարցի վերաբերյալ ընդհանուր փաստաթուղթ ստեղծելու ժամանակը, որն աստիճանաբար կփոխարինի նեղ տնտեսական ոլորտներում կիրառվող՝ գոյություն ունեցող փաստաթղթերին, նպատակ ունենալով հասնել մանկա-կան աշխատանքի լրիվ վերացմանը, որոշելով, որ այդ առաջարկությունները պետք է ունենան միջազգային կոնվենցիայի ձև, հազար ինը հարյուր յոթանասուներեք թվականի հունիսի վեցին ընդունում է սույն Կոնվենցիան, որը կարող է անվանվել «Նվազագույն տարիքի մասին» 1973 թվականի Կոնվենցիա:

### Հոդված 1

Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ, որի նկատմամբ սույն Կոնվենցիան ուժի մեջ է, պարտավորվում է իրականացնել ազգային քաղաքականություն՝ ուղղված մանկական աշխատանքի արդյունավետ վերացմանը և զբաղվածության կամ աշխատանքի ընդունման նվազագույն տարիքի հետզհետե բարձրացմանն այն մակարդակի, որն առավելագույնս համապատասխանում է դեռահասների մարմնական և մտավոր զարգացմանը:

### Հոդված 2

1. Սույն Կոնվենցիան վավերացրած Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ իր վավերագրին կից հայտարարության մեջ նշում է իր տարածքում զբաղվածության կամ աշխատանքի ընդունվելու և իր տարածքում զբանցված փոխադրամիջոցների ոլորտում աշխատանքի ընդունվելու նվազագույն տարիքը, և, համաձայն սույն

Կոնվենցիայի 4-րդից 8-րդ հոդվածների դրույթների, այդ տարիքից ցածր ոչ մի դեռահասի թույլ չի տրվում աշխատանքի ընդունվել որևէ մասնագիտությամբ:

2. Սույն Կոնվենցիան վավերացրած Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ հետագայում լրացուցիչ հայտարարությունների միջոցով կարող է ծանուցել Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին այն մասին, որ ինքը սահմանում է ավելի բարձր նվազագույն տարիք, քան նախկինում սահմանվածն է:

3. Նվազագույն տարիքը, որը որոշվում է ի կատարումն սույն հոդվածի 1-ին կետի, չպետք է ցածր լինի դպրոցական պարտադիր ուսումնական ավարտելու տարիքից և բոլոր դեպքերում չպետք է ցածր լինի 15-ից:

4. Անկախ սույն հոդվածի 3-րդ կետի դրույթներից՝ Կազմակերպության այն անդամը, որի տնտեսությունը և կրթության համակարգը բավականաչափ զարգացած չեն, գործատուների և աշխատողների շահագրգիռ կազմակերպությունների առկայության դեպքում դրանց հետ խորհրդակցելուց հետո կարող է սկզբնական շրջանում որպես նվազագույն տարիք սահմանել 14-ը:

5. Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ, որը, ի կատարումն նախորդ կետի դրույթների, որպես նվազագույն տարիք է սահմանում 14-ը, սույն Կոնվենցիայի կատարման մասին Աշխատանքի միջազգային կազմակերպության Կանոնադրության 22-րդ հոդվածի համաձայն ներկայացված հաշվետվություններում ընդգրկում է հայտարարություն այն մասին, որ՝

ա) դրա համար գոյություն ունեն պատճառներ, կամ

բ) հրաժարվում է հետևյալ դրույթներից օգտվելու իր իրավունքից՝ սկսած նշված օրվանից:

### **Հոդված 3**

1. Իր բնույթով կամ իրագործման հանգամանքների բերումով դեռահասի առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը հնարավոր վնաս հասցնող ցանկացած տիպի զբաղվածության կամ աշխատանքի ընդունելու նվազագույն տարիքը չպետք է ցածր լինի 18-ից:

2. Ջբաղվածության կամ աշխատանքի այն տեսակները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն հոդվածի 1-ին կետը, սահմանվում են ազգային օրենքներով կամ կանոնակարգերով կամ իրավասու մարմնի կողմից՝ գործատուների և աշխատողների շահագրգիռ կազմակերպությունների առկայության դեպքում դրանց հետ խորհրդակցելուց հետո:

3. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ ազգային օրենքները կամ կանոնակարգերը կամ իրավասու մարմինը գործատուների և աշխատողների շահագրգիռ կազմակերպությունների առկայության դեպքում դրանց հետ խորհրդակցելուց հետո կարող են թույլատրել աշխատանքի ընդունել տասնվեցից ոչ ցածր տարիքի անձանց՝ պայմանով, որ այդ դեռահասների առողջությունը, անվտանգությունը և բարոյականությունը լիովին պաշտպանված են, և որ դեռահասները գործունեության համապատասխան բնագավառի գծով ստացել են հատուկ հրահանգներ կամ մասնագիտական պատրաստություն:

### **Հոդված 4**

1. Անհրաժեշտության դեպքում իրավասու մարմինը գործատուների և աշխատողների շահագրգիռ կազմակերպությունների առկայության դեպքում դրանց հետ խորհրդակցելուց հետո կարող է սույն Կոնվենցիայի կիրառման ոլորտից բացառել զբաղվածության կամ աշխատանքի սահմանափակ կատեգորիաներ, որոնց առումով ծագում են հատուկ, լուրջ հիմնախնդիրներ:

2. Սույն Կոնվենցիան վավերացրած յուրաքանչյուր Անդամ, Աշխատանքի միջազգային կազմակերպության Կանոնադրության 22-րդ հոդվածի համաձայն, Կոնվենցիայի կիրառման մասին իր առաջին զեկույցում թվարկում է այն կատեգորիաները, որոնք կարող են բացառվել, ի կատարումն սույն հոդվածի 1-ին կետի, նշելով այդպիսի բացառությունների պատճառները, և հետագա զեկույցներում հաղորդում է բացառված կատեգորիաների վերաբերյալ իր օրենքի և պրակտիկայի սկզբունքները և այն չափը, որով Կոնվենցիան կիրառվել է կամ ենթադրվում է, որ պետք է կիրառվի այդպիսի կատեգորիաների նկատմամբ:

3. Զբաղվածությունը կամ աշխատանքը, որոնց վրա տարածվում է սույն Կոնվենցիայի 3-րդ հոդվածը, չեն բացառվում Կոնվենցիայի կիրառման ոլորտից՝ ի կատարումն սույն հոդվածի:

## **Հոդված 5**

1. Կազմակերպության այն Անդամը, որի տնտեսությունը և վարչական համակարգը բավականաչափ զարգացած չեն, գործատուների և աշխատողների շահագրգիռ կազմակերպությունների առկայության դեպքում դրանց հետ խորհրդակցելուց հետո կարող է սկզբնական շրջանում սահմանափակել սույն Կոնվենցիայի կիրառման ոլորտը:

2. Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ, որն օգտվում է սույն հոդվածի 1-ին կետի դրույթներից, վավերագրին կից հայտարարության մեջ թվարկում է տնտեսական գործունեության կամ ձեռնարկությունների այն տեսակները, որոնց նկատմամբ ինքը կիրառելու է սույն Կոնվենցիայի դրույթները:

3. Կոնվենցիայի դրույթները կիրառվում են առնվազն հետևյալ աշխատանքների նկատմամբ. հանքահորեր և քարհանքեր, վերամշակման արդյունաբերություն, շինարարություն, էլեկտրա-, գազա- և ջրամատակարարման ծառայություններ, սանիտարատեխնիկական ծառայություն, տրանսպորտ, պահեստներ և հաղորդակցության ծառայություններ, հիմնականում առևտրային նպատակով մթերք արտադրող տնկարկներ և գյուղատնտեսական այլ կազմակերպություններ՝ բացառությամբ ընտանեկան կամ այլ փոքր տնտեսությունների, որոնք մթերքն արտադրում են տեղական օգտագործման համար և վարձու աշխատողներ մշտապես չեն օգտագործում:

4. Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ, որը սահմանափակում է սույն Կոնվենցիայի կիրառման ոլորտը՝ ի կատարումն սույն հոդվածի.

ա) Աշխատանքի միջազգային կազմակերպության Կանոնադրության 22-րդ հոդվածի համաձայն ներկայացվող իր զեկույցներում նշում է սույն Կոնվենցիայի կիրառման ոլորտից բացառված գործունեության ճյուղերում պատանիների և երեխաների զբաղվածության կամ աշխատանքի ընդհանուր վիճակի և ցանկացած

առաջընթացի մասին, որը ձեռք է բերվում սույն Կոնվենցիայի դրույթներն ավելի լայնորեն կիրառելու ճանապարհին,

բ) կարող է ցանկացած պահի պաշտոնապես ընդլայնել Կոնվենցիայի կիրառման ոլորտը Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին ուղարկված հայտարարության միջոցով:

## **Հոդված 6**

Սույն Կոնվենցիան չի կիրառվում այն աշխատանքի նկատմամբ, որը կատարվում է երեխաների և դեռահասների կողմից ընդհանուր, մասնագիտական կամ տեխնիկական կրթության դպրոցներում կամ ուսումնական այլ հաստատություններում, կամ այն աշխատանքների նկատմամբ, որոնք կատարվում են կազմակերպություններում առնվազն տասնչորս տարեկան երեխաների կողմից, եթե այդպիսի աշխատանքները կատարվում են իրավասու մարմնի կողմից սահմանված պայմաններին համապատասխան, գործատուների և աշխատավորների շահագրգիռ կազմակերպությունների առկայության դեպքում դրանց հետ խորհրդակցելուց հետո և անբաժանելի մասն են.

ա) կրթության կամ ուսումնական դասընթացի, որոնց համար հիմնական պատասխանատվությունը կրում են դպրոցը կամ ուսումնական հաստատությունը,

բ) իրավասու մարմնի կողմից հավանության արժանացած ուսումնական ծրագրի, որը գլխավորապես կամ ամբողջովին անցկացվում է ձեռնարկությունում, կամ

գ) հրահանգիչ կամ կողմնորոշիչ ծրագրերի, որոնք ուղղված են մասնագիտության կամ ուսումնական տեսակի ընտրության հեշտացմանը:

## **Հոդված 7**

1. Ազգային օրենքները կամ կանոնակարգերը կարող են թույլատրել 13-ից 15 տարեկանների զբաղվածությունը կամ աշխատանքը թեթև աշխատանքների դեպքում, որը.

ա) վտանգ չի կարող ներկայացնել նրանց առողջության կամ զարգացման համար, և

բ) չի խանգարում դպրոց հաճախելուն, իրավասու մարմնի կողմից հավանության արժանացած մասնագիտական կողմնորոշման կամ ուսումնական ծրագրերին նրանց մասնակցությանը կամ ստացված կրթության օգտագործման նրանց կարողությանը:

2. Ազգային օրենքները կամ կանոնակարգերը կարող են նաև թույլատրել առնվազն տասնհինգ տարեկանը լրացած, սակայն պարտադիր դպրոցական ուսումը դեռևս չավարտած անձանց աշխատանքի ընդունումը՝ պայմանով, որ կպահպանվեն սույն հոդվածի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջները:

3. Իրավասու մարմինը սահմանում է գործունեության այն ոլորտները, որտեղ զբաղվածությունը կամ աշխատանքը կարող են թույլատրվել համաձայն սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, և սահմանում է աշխատանքային ժամերը և

պայմանները, որոնց ընթացքում և որոնց առկայության դեպքում կարող է իրագործվել այդպիսի զբաղվածությունը կամ աշխատանքը:

4. Անկախ սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներից՝ Կազմակերպության Անդամը, որն օգտվում է 2-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներից, կարող է իրեն անհրաժեշտ տևողությամբ փոխարինել սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված 12 և 14 տարեկան հասակները 13 և 15 տարեկան հասակներով և 2-րդ կետի 14 տարեկան հասակը՝ 15 տարեկան հասակով:

### **Հոդված 8**

1. Իրավասու մարմինը գործատուների և աշխատողների շահագրգիռ կազմակերպությունների առկայության դեպքում դրանց հետ խորհրդակցելուց հետո կարող է անհատական դեպքերում շնորհված թույլտվությունների ճանապարհով բացառություններ անել սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածով զբաղվածությունը կամ աշխատանքը արգելող դրույթներից այնպիսի նպատակի համար, ինչպիսին է մասնակցությունը դերասանական ելույթներին:

2. Այդ կերպ տված թույլտվությունը սահմանափակում է ժամաքանակը և սահմանում է այն պայմանները, որոնցում կարող է իրագործվել զբաղվածությունը կամ աշխատանքը:

### **Հոդված 9**

1. Իրավասու մարմինը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, ներառյալ համապատասխան պատիժների սահմանումը, սույն Կոնվենցիայի դրույթների արդյունավետ կենսագործումն ապահովելու համար:

2. Ազգային օրենքները կամ կանոնակարգերը կամ իրավասու մարմինը որոշում են այն անձանց, որոնք պատասխանատու են Կոնվենցիայի կատարումը ապահովող դրույթների համապատասխանության համար:

3. Ազգային օրենքները կամ կանոնակարգերը կամ իրավասու մարմինը սահմանում են գրանցամատյաններ կամ այլ փաստաթղթեր, որոնք պետք է վարվեն և տրամադրվեն գործատուի կողմից. այդպիսի գրանցամատյանները կամ փաստաթղթերը ընդգրկում են նրա կողմից վարձված կամ նրա համար աշխատող 18 տարեկանից փոքր անձանց ազգանունները և, եթե հնարավոր է, պատշաճ կերպով հաստատված տարիքը կամ ծննդյան տարեթիվը:

### **Հոդված 10**

1. Սույն հոդվածով նախատեսված պայմաններով՝ սույն Կոնվենցիան վերանայում է Նվազագույն տարիքի մասին 1919 թվականի կոնվենցիան (արդյունաբերության ոլորտում), Նվազագույն տարիքի մասին 1920 թվականի կոնվենցիան (ծովային աշխատանքների ոլորտում), Նվազագույն տարիքի մասին 1921 թվականի կոնվենցիան (գյուղատնտեսության ոլորտում), Նվազագույն տարիքի մասին 1921 թվականի կոնվենցիան (նավատորմում ածուխ բեռնողների և

հնոցապանների համար), օՆվազագույն տարիքի մասին 1932 թվականի կոնվենցիան (ոչ արդյունաբերական աշխատանքներում), օՆվազագույն տարիքի մասին 1936 թվականի կոնվենցիան (ծովային աշխատանքների ոլորտում), (վերանայված), օՆվազագույն տարիքի մասին 1937 թվականի կոնվենցիան (արդյունաբերության ոլորտում), (վերանայված), օՆվազագույն տարիքի մասին 1937 թվականի կոնվենցիան (ոչ արդյունաբերական աշխատանքներում), (վերանայված), օՆվազագույն տարիքի մասին 1959 թվականի կոնվենցիան (ձկնորսների համար) և օՆվազագույն տարիքի մասին 1965 թվականի կոնվենցիան (ստորերկրյա աշխատանքներ):

2. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը հետագա վավերացման համար չի փակում օՆվազագույն տարիքի մասին 1936 թվականի կոնվենցիան (ծովային աշխատանքների ոլորտում), (վերանայված), օՆվազագույն տարիքի մասին 1937 թվականի կոնվենցիան (Արդյունաբերության ոլորտում), (վերանայված), օՆվազագույն տարիքի մասին 1937 թվականի կոնվենցիան (Ոչ արդյունաբերական աշխատանքներում), (վերանայված), օՆվազագույն տարիքի մասին 1959 թվականի կոնվենցիան (ձկնորսների համար) և օՆվազագույն տարիքի մասին 1965 թվականի կոնվենցիան (Ստորերկրյա աշխատանքներ):

3. օՆվազագույն տարիքի մասին 1919 թվականի կոնվենցիան (արդյունաբերության ոլորտում), օՆվազագույն տարիքի մասին 1920 թվականի կոնվենցիան (ծովային աշխատանքների ոլորտում), օՆվազագույն տարիքի մասին 1921 թվականի կոնվենցիան (գյուղատնտեսության ոլորտում) և օՆվազագույն տարիքի մասին 1921 թվականի կոնվենցիան (նավատորմում ածուխ բեռնողների և հնոցապանների համար) փակվում են հետագա վավերացման համար, երբ Կոնվենցիայի բոլոր մասնակիցները համաձայնում են այդպիսի փակմանը՝ վավերացնելով սույն Կոնվենցիան կամ հայտարարություն ուղարկելով Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին:

4. Երբ սույն Կոնվենցիայի պարտավորություններն ընդունվում են.

ա) Կազմակերպության այն Անդամի կողմից, որը հանդիսանում է օՆվազագույն տարիքի մասին 1937 թվականի կոնվենցիայի (արդյունաբերության ոլորտում), (վերանայված) մասնակից, և եթե, ի կատարումն սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի, նվազագույն տարիքը սահմանվում է 15-ից ոչ ցածր, դա ipso jure հանգեցնում է այդ կոնվենցիայի չեղյալ հայտարարմանը,

բ) ոչ արդյունաբերական զբաղվածության դեպքում, ինչպես սահմանված է օՆվազագույն տարիքի մասին 1937 թվականի կոնվենցիայով (ոչ արդյունաբերական աշխատանքներում), (վերանայված), այդ կոնվենցիայի մասնակից Անդամի կողմից, դա ipso jure հանգեցնում է այդ կոնվենցիայի անհապաղ չեղյալ հայտարարմանը,

գ) ոչ արդյունաբերական զբաղվածության դեպքում, ինչպես սահմանված է օՆվազագույն տարիքի մասին 1937 թվականի կոնվենցիայով (ոչ արդյունաբերական աշխատանքներում), (վերանայված), այդ կոնվենցիայի մասնակից Անդամի կողմից, և եթե, ի կատարումն սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի, նվազագույն տարիքը սահմանվում է 15-ից ոչ ցածր, դա ipso jure հանգեցնում է այդ կոնվենցիայի անհապաղ չեղյալ հայտարարմանը,

դ) ծովային աշխատանքներում զբաղվածության դեպքում՝ օՆվազագույն տարիքի մասին 1936 թվականի կոնվենցիայի (ծովային աշխատանքների ոլորտում), (վերանայված), մասնակից Անդամի կողմից, և, եթե, ի կատարումն սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի, նվազագույն տարիքը սահմանվում է 15-ից ոչ ցածր, կամ Կազմակերպության անդամը ճշտում է, որ սույն Կոնվենցիայի 3-րդ հոդվածը կիրառվում է ծովային աշխատանքներում զբաղվածության նկատմամբ, դա ipso jure հանգեցնում է այդ կոնվենցիայի անհապաղ չեղյալ հայտարարմանը,

ե) ծովային ձկնորսության դեպքում՝ օՆվազագույն տարիքի մասին 1959 թվականի կոնվենցիայի (ձկնորսների համար) մասնակից Անդամի կողմից, և եթե, ի կատարումն սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի, նվազագույն տարիքը սահմանվում է 15-ից ոչ ցածր, կամ Կազմակերպության անդամը ճշտում է, որ սույն Կոնվենցիայի 3-րդ հոդվածը կիրառվում է ծովային ձկնորսության նկատմամբ, դա ipso jure հանգեցնում է այդ կոնվենցիայի անհապաղ չեղյալ հայտարարմանը,

զ) օՆվազագույն տարիքի մասին 1965 թվականի կոնվենցիայի (ստորերկրյա աշխատանքներ) մասնակից հանդիսացող Անդամի կողմից, և եթե, ի կատարումն սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի, նվազագույն տարիքը սահմանվում է 15-ից ոչ ցածր, կամ Անդամը ճշտում է, որ այդ տարիքը կիրառվում է հանքավայրերում ստորերկրյա աշխատանքների նկատմամբ, դա ipso jure հանգեցնում է այդ կոնվենցիայի անհապաղ չեղյալ հայտարարմանը,

եթե և երբ սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի:

5. Սույն Կոնվենցիայի պարտավորությունների ընդունումը.

ա) հանգեցնում է օՆվազագույն տարիքի մասին 1919 թվականի կոնվենցիայի (արդյունաբերության ոլորտում) չեղյալ հայտարարմանը՝ համաձայն սույն Կոնվենցիայի 12-րդ հոդվածի,

բ) գյուղատնտեսության դեպքում հանգեցնում է օՆվազագույն տարիքի մասին 1921 թվականի կոնվենցիայի (գյուղատնտեսության ոլորտում) չեղյալ հայտարարմանը՝ համաձայն սույն Կոնվենցիայի 9-րդ հոդվածի,

գ) ծովային աշխատանքների դեպքում՝ օՆվազագույն տարիքի մասին 1920 թվականի կոնվենցիայի (ծովային աշխատանքների ոլորտում) և օՆվազագույն տարիքի մասին 1921 թվականի կոնվենցիայի (նավատորմում ածուխ բեռնողների և հնոցապանների համար) չեղյալ հայտարարմանը՝ համաձայն, համապատասխանաբար, 10-րդ և 12-րդ հոդվածների:

## **Հոդված 11**

Սույն Կոնվենցիայի վավերագրերը գրանցման նպատակով ուղարկվում են Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին:

## **Հոդված 12**

1. Սույն Կոնվենցիան պարտադիր է Աշխատանքի միջազգային Կազմակերպության միայն այն անդամների համար, որոնց վավերագրերը գրանցված են Գլխավոր տնօրենի կողմից:

2. Այն ուժի մեջ է մտնում երկու Անդամների վավերագրերը Գլխավոր տնօրենի կողմից գրանցվելու օրվանից տասներկու ամիս հետո:

3. Հետագայում սույն Կոնվենցիան յուրաքանչյուր Անդամի նկատմամբ ուժի մեջ է մտնում նրա վավերագրի գրանցումից տասներկու ամիս հետո:

### **Հոդված 13**

1. Սույն Կոնվենցիան վավերացրած ցանկացած Անդամ կարող է այն չեղյալ համարել Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից տասնամյա ժամկետը լրանալուց հետո՝ Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին գրանցման նպատակով չեղյալ հայտարարման մասին փաստաթուղթ ներկայացնելու միջոցով: Նման չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարելու վերաբերյալ ակտի գրանցումից մեկ տարի հետո:

2. Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ, որը վավերացրել է սույն Կոնվենցիան, և որը նախորդ կետում նշված տասնամյա ժամանակահատվածին հաջորդող մեկ տարվա ընթացքում չի իրականացնում սույն հոդվածում նախատեսված չեղյալ հայտարարելու իր իրավունքը, պարտավորված կլինի հաջորդ տասնամյա ժամկետում և հետագայում ևս կկարողանա չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան սույն հոդվածով սահմանված կարգով՝ յուրաքանչյուր տասնամյա ժամկետը լրանալուց հետո:

### **Հոդված 14**

1. Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենն Աշխատանքի միջազգային կազմակերպության բոլոր Անդամներին ծանուցում է Կազմակերպության Անդամներից ստացած բոլոր վավերագրերի և չեղյալ հայտարարելու վերաբերյալ փաստաթղթերի գրանցման մասին:

2. Կազմակերպության Անդամներին ծանուցելով իր ստացած 2-րդ վավերագրի գրանցման մասին՝ Գլխավոր տնօրենը Կազմակերպության Անդամների ուշադրությունը հրավիրում է սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա վրա:

### **Հոդված 15**

Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենը, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան, գրանցման համար Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղարկում է ամբողջական տեղեկություններ բոլոր վավերագրերի և չեղյալ հայտարարելու վերաբերյալ ակտերի մասին, որոնք իր կողմից գրանցվել են նախորդ հոդվածների դրույթներին համապատասխան:



## **Հոդված 16**

Ամեն անգամ, երբ Աշխատանքի միջազգային բյուրոյի վարչական խորհուրդը անհրաժեշտ է համարում, Գլխավոր խորհրդաժողովին զեկույց է ներկայացնում սույն Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ և քննարկում է խորհրդաժողովի օրակարգում դրա լրիվ կամ մասնակի վերանայման հարցի ընդգրկման նպատակահարմարությունը:

## **Հոդված 17**

1. Այն դեպքում, երբ խորհրդաժողովն ընդունում է նոր կոնվենցիա, որն ամբողջովին կամ մասնակիորեն վերանայում է սույն Կոնվենցիան, և եթե նոր կոնվենցիայում չի նախատեսվում հակառակը, ապա.

ա) Անդամի կողմից նոր, վերանայված կոնվենցիայի վավերացումը, անկախ 13-րդ հոդվածի դրույթներից, հանգեցնում է ipso jure սույն Կոնվենցիայի անհապաղ չեղյալ հայտարարման՝ պայմանով, որ նոր, վերանայված կոնվենցիան ուժի մեջ մտած լինի,

բ) նոր, վերանայված կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից սկսած՝ սույն Կոնվենցիան դադարում է Անդամների վավերացման համար բաց լինելուց:

2. Սույն Կոնվենցիան բոլոր դեպքերում ըստ ձևի և բովանդակության մնում է ուժի մեջ այն Անդամների համար, որոնք վավերացրել են այն, բայց չեն վավերացրել վերանայված կոնվենցիան:

## **Հոդված 18**

Սույն Կոնվենցիայի անգլերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են: